ԵՐԴՈՒՄԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒՄ

ՂՌԵՋՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
Բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
բանահյուսության տեսության
և պատմության բաժնի գիտաշխատող
էլփոստ՝ ghrejyan76@mail.ru

Հմայական բանահյուսությունը մեծ տեղ է գրավում մասնավորապես հին ժողովուրդների վաղնջական հավատալիքների, կրոնական պատկերացումների, աշխարհընկալումների հետազոտման բնագավառում և պատմամշակութային կարևոր արժեք է ներկայացնում նրանց նախնադարյան մտածողության, բանաստեղծական ընկալումների բացահայտման և լուսաբանման բնագավառներում :

Երդումը, հնուց ի վեր հանդիսանալով հմայական - կիրառական բանահյուսության տեսակներից, տարածված է եղել աշխարհի բոլոր ժողովուրդների կենցաղում և ցայսօր էլ իր ուրույն տեղն ունի ժողովրդի կյանքի տարբեր բնագավառներում: Իբրև ցանկության հմայական խոսքեր՝ երդումներն օժտված են հմայական զորությամբ և ուղղված են տվյալ առարկայի, անձի և իրադրության փոփոխությանը:

Երդումը, պատկանելով բանահյուսության վիպական սեռին, զանազան ձևերով առնչվում է քնարական սեռի ստեղծագործությունների՝ ժողովրդական երգերի հետ, որը խոսում է վերոնշյալ բանաձևային այդ կառույցի՝ հնուց ի վեր ակտիվ կենցաղավարման և կիրառման, ինչպես նաև դրանց և երգերի՝ ժողովրդի կյանքում ունեցած մեծ դերի մասին:

Հոդվածում քննության են առնվում հայկական ժողովրդական երգերի (հայրեններ, անտունիներ, խաղիկներ) և երդումների բազմաբնույթ առնչությունները:

Բանալի բառեր՝ *հմայական-կիրառական բանահյուսություն, ժողովրդական երգ, երդում, հայրեն, անտունի, խաղիկ, հավատալիք:*

Հայկական ժողովրդական երդումների, ինչպես նաև երդմնաբանադրական բանահյուսության մյուս ժանրերի՝ անեծքների, օրհնանքների և բա-

ռեմաղթանքների ծագումնաբանական ընդհանրությունը հավատքն է՝ պայմանավորված խոսքի հմայական զորությամբ: Բոլոր ժամանակներում էլ խոսքը եղել է մարդու՝ բնության դեմ մղած պայքարի միջոց: Իբրև ցանկության իրականացման խոսքեր՝ վերոհիշյալ բանաձևերը շատ կողմերով առնչվում են ժողովրդական աշխարհընկալմանը, մասնավորապես հնագույն հավատալիքներին: Այսպես, Թալասում հավատում էին, որ եթե մեկն օձի հանդիպի և ասի հետևյալ օրհնանքը՝ «զիս չխայթող օձը հազար ապրի» (Բյուրակն 1900, 132), ապա օձը նրան չի խայթի: Սա խոսքի ուժի նկատմամբ հավատք է, ուժ, որին անգամ օձն է ենթարկվում:

Երդումը՝ իբրև ժողովրդախոսակցական լեզվի ավանդական պատկերավոր բանաձև, մի շարք ընդհանրություններ ունի բանահյուսական մյուս ժանրերի հետ, որոնց դրսևորումներից են ժողովրդական երգերը:

Ժողովրդական երգերի հետ երդումների ունեցած կապը դրսևորվում է սյուժետային-կառուցվածքային յուրահատկությունների և պատկերավորման միջոցների կիրառությամբ:

Ժողովրդական երգաշխարհում երդումների տարատեսակ դրսևորումները վկայում են արվեստի նախնական սինկրետիկ վիճակի վերապրուկների առկայության, ինչպես նաև նրանց բնական և պատմական կյանքով զարգացող բանահյուսական տարբեր ժանրերի՝ իրար նկատմամբ ունեցած փոխադարձ ազդեցության ու ներգործության հարատևության մասին: Երդումների դրսևորումները ժողովրդական երգերի մեջ հստակ պատկերացում են տալիս ժանրի ակտիվ կենցաղավարման և ժողովրդի կյանքում դրանց ունեցած մեծ դերի մասին:

Ժողովրդական երգերում երդումը հանդես է գալիս՝

ա. անեծքաերդումային կառուցվածքով: Օրինակ՝ հայրեններից մեկում սիրահարներն աստծու վկայությամբ իրար սիրո երդում են տալիս՝ պայմանով, որ սերը մոռանալու դեպքում կենթարկվեն մարմնական տանջանքի՝ անդամալուծության.

Իմ եարն ւ ես մէկտեղ եկաք,
Բռնեցաք մեք զաստուած վկայ,
Մեծ ղավլ ու երդումն արաք՝
Գոթենայ՝ ով սէրն ուրանա…

Այսպես, երդումն իր հիմքում պայմանական բնույթ է ստանում, որի խախտման դեպքում գործելու է անեծքը:

Անեծքաերդումային կառուցվածքով բանաձևերը բնորոշվում են պայմանի և հետևության հարաբերությամբ ու իմաստային կապ ունեն պայմանով անեծքների հետ, այսինքն՝ բաղկացած են որոշակի պայմանից և իրադրությունից, սակայն այն տարբերությամբ, որ երդման մեջ էականը պայմանն է, մինչդեռ պայմանով անեծքներում իրադրությունն է գլխավորը: Պայմանով անեծքներում և՛ պայմանը, և՛ անեծքը ուղղված են անիծվողին, իսկ անեծքով երդման դեպքում և՛ պայմանի, և՛ անեծքի կրողը երդվողն է[1], այսինքն՝ անեծք- երդումն ինքնաբանադրանք է, հասարակական ըմբռնմամբ պայմանավորված մի վատ ցանկություն, որին հոժարությամբ ենթարկվում է առաջադրողը: Եվ այս առանձնահատկությամբ էլ միմյանցից տարբերվում են երդումն ու պայմանով անեծքը, որոնք նման են իրենց արտաքին կառուցվածքով:

Երդման պայմանը, բացի սովորական անեծքից, կարող է լինել նաև հայհոյանք, որը երբեմն սեռական բնույթ ունի (Ես իմ մերը..., թե տեսել եմ), կամ անպատվաբեր հիշոց է («Շանից ծնված ըլնեմ, թե սուտ է ասածներս», «Շան կաթ կերած ըլնեմ, թե ուղիղը չասեմ» և այլն): Այն սովորական անեծքից կամ հայհոյանքից տարբերվում է իրադրության հետ ունեցած պայմանական կապով և փոխհարաբերությամբ: Այսինքն՝ ըղձական եղանակը վերածվում է պայմանականի (քանզի երդումն ինքը պայման-հավաստիացումն է իրավացի լինելու, այսինքն՝ թող ինքը չարի, վատի, փորձանքի հանդիպի, մեռնի և այլն, եթե իրավացի չէ): Այս ոճատրամաբանական փոփոխության մեջ էլ կայանում է երդման տարբերությունը անեծքից կամ հայհոյանքից: Երդման կառույցի այս տեսակը հանդիպում է հայրեններից մեկում.

Մարդ չեղնամ, թէ էլ եար սիրեմ,
Կամ զքո սէրն մոռանամ.
Կամ զքո անուշիկ պագիկն
Ի սրտէս հանեմ, ուրանամ[2]...

Երդման պայմանը անպատվաբեր հիշոց է. դավաճանելու, սերն ու «անուշիկ պագիկը» մոռանալու դեպքում գործելու է անեծքը:

բ. Իր՝ երդման ուղղակի նշանակությամբ: Այն ընկալվել է իբրև հմայական խոսք, որից զգուշացել և որին հավատացել են ոչ միայն հայերը, այլև

---

[1] Հարությունյան Ս., Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Երևան, 1975, էջ 138:

[2] Հայրեններ, քննական բնագիրը, ներածությունը և ծանոթագրություններ Ա. Շ. Մնացականյանի, Երևան, 1995, էջ 90:

աշխարհի բոլոր ժողովուրդները՝ անկախ իրենց քաղաքակրթության աստիճանից: Հայրեններում ոչ միայն մեջբերվում են երդումներ, այլև ուղղակի նշվում է, որ հերոսը երդում է տալիս այս կամ այն պայմանով: Օրինակ՝ «Երդումն ի բերանն էառ//, -Գնալու եմ, չեմ կենալու»[1], «Երդնում զինչ երդում որ կայ,// Որ քան զքեզ աղեկ մի չի կար»[2]:

Երգերից մեկում երգիչը խնդրում է իր սիրուհուն թույլ տալ, որ մտնի նրա ծոցը, այն դարձնի պարտեզ, երդվի, որ տված խոստումը չի խախտի:

Հոգե՛կ, թե տայիր տէսթուր,
Որ զծոցիկդ ի յետ բանայի,
Զծոցիկդ պաղչայ անէի,
Տէսթուրով ի ներս մտնէի,
Երդուի, երդում տայի,
Այն տէսթուրից դուրս չգայի[3]:

Ինչպես տեսնում ենք, հերոսը ոչ թե երդում է տալիս, այլ խոսքն այն մասին է, որ նա արդեն երդվել է:

գ. Երդում-վկայակոչումով, որն առավել հաճախ է հանդիպում ժողովրդական երգաշխարհում: Երդումների այս տեսակում վկայակոչվող տնային – կենցաղային, այսինքն՝ կենսական նշանակություն ունեցող առարկաները (հաց, գինի և այլն), որոնք պատկանում են քրիստոնեական և ժողովրդական հավատալիքների ոլորտներին, ժողովրդական երգում ձեռք են բերում կրոնական և ծիսապաշտամունքային բնույթ:

Ժողովրդական երգերից մեկում կտրիճը խնդրում է աղջկան իր ձիու գավակին նստել և զբոսնել, բայց աղջիկը վախենում է ու չի վստահում.

-Կու վախեմ՝ մոլորցընես,
Ջուպես հանել տաս...
Տղան փարատում է նրա երկյուղը՝ նախապես երդվելով.
-Երդվընամ հաց ւ գինին,
Զաստուած կենդանին,
Զաստուած կենդանին[4]:

---

[1] Նշվ. աշխ., էջ 308:
[2] Աբեղյան Մ.,Գուսանական ժողովրդական տաղեր, Երևան, 1940, էջ 104:
[3] Նշվ. աշխ., էջ 117:
[4] Մնացականյան Աս., Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 135:

Երգերում վկայակոչվում են նաև երկնային լուսատուները (արև, լուսին) և երկրային առարկաները (երկինք, գետին, ծով և այլն):

Այսպես, հայոց հնագույն արևապաշտության հետքերը, որոնք իրենց արմատներով գնում են քաղաքակրթական մշակույթի խորքերը, իրենց դրսևորումն են գտել ժողովրդական երդումներում: Ժողովրդական պատկերացումներում արևը միշտ ընկալվում է իբրև կյանքի գոյության և կենդանության խորհրդանիշ: Արևով (հատկապես որևէ մեկի) երդումները հանդիպում են ժողովրդական երգերի տարբեր շարքերում:

Եղբայրը՝ որպես հոգեհարազատ ու նվիրական անձ, արժանի է խոր հարգանքի և պաշտամունքի, հետևաբար նաև երդման.

Քա՛լ, քո Աստուած սիրուն,
Քո մէկիկ աղբօրն արևուն[1]...

Երգերում հաճախ վկայակոչվում է նաև մանկան արևը.

Մանկտի՛ք, ձեր արևն ասեմ,
Լսեցի՝ լեզուս կապեցավ[2]...
Մանկտի՛ք, ձեր արևն ասեմ,
Նայ սիրուն՝ քար չի դիմանա[3]...
Մանկտի՛ք, ձեր արևն ասեմ,
Ցըցուցէք ինձ ելնելու ճար[4]...

Երկնային լուսատուների պաշտամունքից է սերում լուսնի արևով (գոյությամբ) երդվելը, որը, բնականաբար, բանաստեղծական երևակայության արդյունք է:

...Լուսի՛ն, քո արեւդ ասեմ,
Պահ մի կաց, մինչ որ լուսանայ.
Երկու բան գանգատ ունիմ[5]...

Լուսնի առաջ կանգնելը, նրանից հոգեկան և ֆիզիկական առողջություն խնդրելը տարածված և մինչ օրս առօրեական է հայ իրականության մեջ:

---

[1] Հայրեններ, քննական բնագիրը, ներածությունը և ծանոթագրություններ Ա. Շ. Մնացականյանի, Երևան, 1995, էջ 286:
[2] Նշվ. աշխ., էջ 65:
[3] Նշվ. աշխ., էջ 82:
[4] Նշվ. աշխ., էջ 55:
[5] Աբեղյան Մ.,Գուսանական ժողովրդական տաղեր, Երևան, 1940, էջ 215:

Վկայակոչումը կարող է լինել ինչպես մանկան, եղբոր ու լուսնի, այնպես էլ սեփական անձի արևով. «...Երնեկ արևուս վըրա,// Դու ի մեր դռնակըն չէ՛ս եկեր»[1]:

Հանդիպում են նաև սիրած էակի արևով երդումներ.

Ի՛մ եար, քու արևդ ասեմ,
Քեզի սէր կայ ի մէջ սրտիս.
Ասե՛մ, չամաչեմ այլ ես.
Կու սիրեմ, որ կելնէ հոգիս:

Իմ եար, քո արևդ ասեմ,
Միս չունիմ, ոսկերքս է մաշել,
Կաթիլ մ՚ արիւնիկ ունիմ,
Քո սիրուդ ան ալ ցամաքել[2] :

Կամ՝

Այդ քոյ ստեղծողիդ համար,
Երբ քայլես՝ զունքըդ մի՛ շարժեր,
Այդ քո աչերուդ խընճերն
Շատ մարդու արիւն է խըմեր,
Խօշ եար, արևուդ համար,
Որբուկ եմ, զիս մի՛ լացըներ,
Տըղայ եմ ու չեմ լըռեր,
Զիս ի քո հոտրն մի՛ ձըգեր[3]:

Բերված հայրենում երդումը՝ երդմնեցուցչական բանաձևը, իր մեջ աղերսանք, խնդրանք և պարտադրանք է պարունակում: Տղան աղերսում է սիրած աղջկան, որ իրեն չտանջի և չգցի սիրո կրակը:

Վերոնշյալ բանաձևերի դրսևորումներ կան ժողովրդական երդումների տարբերակներում, ինչպես, օրինակ, «Թե աստվածդ կսիրես՝ մի անի», «Դու ըլնես ջիվան ջանդ, մի էրթա»[4] և այլն, ինչպես նաև ժողովրդական խաղիկներում.

---

[1] Հայրեններ, քննական բնագիրը, ներածությունը և ծանոթագրություններ Ա. Շ. Մնացականյանի, Երևան, 1995, էջ 65:

[2] Նշվ. աշխ., էջ 252:

[3] Նշվ. աշխ., էջ 230:

[4] Էմինյան ազգագրական ժողովածու, հ. Ա, Մոսկվա-Ալեքսանդրապոլ, 1901, էջ 140:

Աստված սիրես, մի՛ պահի,
Ինձանից խոսքի սաղը[1]:
Յա՛ր, Աստվածդ կըսիրես,
Սիրեր ես, մի՛ մոռանա[2]:
Աստված – աշխարհք կըսիրեք,
Ինձ տվեք են նամարդ տղին[3]:

Այստեղ, ինչպես տեսնում ենք, նույն խնդրանք – պարտադրանքն է, բայց արդեն աստծո ու աշխարհի վկայակոչումով:

Մարդը, հավաստելու համար իր իրավացիությունը, դիմում է Աստծուն, սրբերին, ովքեր ճշմարտության առաջին աղբյուրն են՝ երդվելով կամ վկայակոչելով նրանց.

Երդնում զինչ երդում ունիս,
Որ Աստուած ի վեր վկայ է,
Սըրտիկս ի քենէ ի զատ,
Չեմ մընար՝ թ՚ այլ մարդ կու սիրէ[4]:
Ինձ պես տըղեն քեզի հետ,
Աստված վըկա, լավ կըսազա[5]:
Էն Աստվածն ու երկինքը,
Սիրատերին ճար չի լինի[6]:

Վերջին խաղիկում ասվածի ճշմարտացիությունն ապացուցելու համար վկայակոչվում է նաև երկինքը, որն ըստ էության նույնանում է աստվածային զորության հետ:

Հնագույն ժամանակներից է սերում Աշխարհի՝ հայոց մեջ ձևավորված սկզբնապես երկմաս (երկնքի և երկրի) կառուցվածքի մասին պատկերացումը, որի հավատալիքը դրսևորված է ինչպես ժողովրդական երդումների սեղմ բանաձևերում, այնպես էլ բանաստեղծական վերարտադրության ենթարկված ժողովրդական երգերում:

Երկինք ու գետինք վկա՝

---

[1] Աբեղյան Մ., Ժողովրդական խաղիկներ, Երևան, 1940, էջ 246:
[2] Նշվ. աշխ. էջ 281:
[3] Նույն տեղում:
[4] Հայրեններ, քննական բնագիրը, ներածությունը և ծանոթագրություններ Ա. Շ. Մնացականյանի, Երևան, 1995, էջ 234:
[5] Ժողովրդական խաղիկներ, Երևան, 1940, էջ 131:
[6] Հազար ու մի խաղ, Ժողովրդական երգերի ժողովածու,վերակազմեց Ա.Շահնազարյանը, Երևան, 2015, էջ 57:

Սիրեր եմ ու չեմ մոռանար[1]:
Երկինք ու գետին վկա՝
Չեմ երեր, զքեզ չեմ մոռանայր[2]:

Այսպիսով, ժողովրդական երգաշխարհում երդումների տարատեսակ դրսևորումները վկայում են հմայական խոսքի հանդեպ դարերի խորքից եկող և նրան գաղափարական իմաստ ու կարևորություն հաղորդող հավատքի մասին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբեղյան Մ. Խ., Ժողովրդական խաղիկներ, Երևան, «Հայպետհրատ», 1940:
2. Աբեղյան Մ. Խ., Գուսանական ժողովրդական տաղեր: Հայրեններ և անտունիներ, Երևան, «Հայպետհրատ», 1940:
3. Էմինյան ազգագրական ժողովածու, հ. Ա, Մոսկվա-Ալեքսանդրապոլ, 1901:
4. Հարությունյան Ս. Բ., Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Երևան, 1975:
5. Հայրեններ, քննական բնագիրը, ներածությունը և ծանոթագրություններ Ա. Շ. Մնացականյանի, Երևան, 1995:
6. Հազար ու մի խաղ, Ժողովրդական երգերի ժողովածու, վերակազմեց Ա. Շահնազարյանը, Երևան, 2015:
7. Մնացականյան Աս., Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956:

MANIFESTATIONS OF OATHS IN ARMENIAN FOLK SONGS (Hayrens, Antunis and Songs)

GHREJYAN LUSINE
PHD in Philology, Associate Professor,
GSU Lecturer
e-mail: ghrejyan76@mail.ru

Armenian folk oaths have much in common with other genres of folklore, including folk songs. The connection of oaths with folk songs is manifested both in the use of plot-structural features, visual and expressive means, and in the use of certain works thoroughly or partially. Various manifestations of oaths in folk

[1] Նշվ. աշխ., էջ 74:
[2] Նշվ. աշխ., էջ 253:

songs testify to the presence of remnants of the primitive syncretic state of art, as well as the duration of mutual influence and interaction of various genres of folklore in its historical development.

Key words: *hoodoo-incantatory folklore, folk song, oath, hayren, antuni, song, belief.*

КЛЯТВА В АРМЯНСКИХ НАРОДНЫХ ПЕСНЯХ

КРЕДЖЯН ЛУСИНЕ
Кандидат филологических наук, доцент,
Преподаватель ГГУ
электронная почта: ghrejyan76@mail.ru

Армянские народные клятвы имеют много общего с другими жанрами фольклора, в том числе с народными песнями.

Связь клятв с народными песнями проявляется как в применении сюжетно- структурных особенностей, изобразительно-выразительных средств, так и в использовании тех или иных произведений полностью или частично. Разнообразное проявление клятв в народном песнопении свидетельствует как о наличии пережитков первобытного синкретического состояния искусства, а также о продолжительности взаимовлияния и взаимодействия различных жанров фольклора в своем историческом развитии.

Ключевые слова: *заговорно-заклинательный, прикладной фольклор, народная песня, клятва, айрены, антуни, песенка, верования.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 26.08.2021թ.:
Հոդվածը գրախոսվել է 15.09.2021թ.: